Հաշմանդամների իրավունքները՝ Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 15-րդ հոդված

Փաստաթերթ

European Social Charter | Charte sociale européenne

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հոդված 15.
Հաշմանդամների անկախության, սոցիալական ինտեգրման և հասարակական կյանքում մասնակցության իրավունքը

Հաշմանդամների անկախության, սոցիալական ինտեգրման և հասարակական կյանքում մասնակցության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով, անկախ տարիքից, նրանց հաշմանդամության առաջացման պատճառներից և բնույթից, Կողմերը պարտավորվում են, մասնավորապես՝

1. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ընդհանուր ծրագրերի շրջանակում հաշմանդամներին, հնարավորության սահմաններում, կամ, եթե հնարավոր չէ, մասնավոր և պետական մասնագիտացված մարմինների միջոցով, ուղղվածությամբ, կրթությամբ և մասնագիտական ուսմամբ ապահովելու համար,

2. նպաստել նրանց աշխատանքի տեղավորմանը բոլոր միջոցներով, որոնք ուղղված կլինեն խրախուսելու գործատուներին վարձելու և աշխատեցնելու, հաշմանդամներին աշխատանքային սովորական միջավայրում և հարմարեցնելու աշխատանքային պայմանները հաշմանդամների կարիքներին կամ, եթե դա հնարավոր չէ հաշմանդամության պատճառով. ապա, հաշմանդամության մակարդակի համաձայն՝ մշակել կամ ստեղծել պաշտպանված աշխատանքային պայմաններ: Առանձնահատուկ դեպքերում նման միջոցառումների համար կարելի է դիմել մասնագիտացված կամ օժանդակող ծառայությունների օգնությանը,

3. ապահովել նրանց լրիվ սոցիալական ինտեգրումը և հասարակական կյանքում մասնակցությունը այնպիսի միջոցներով, ներառյալ տեխնիկական օգնությունը, որոնք նպատակաուղղված են հաղթահարելու հաղորդակցության և շարժունակության արգելքները և հնարավորություն տալու մատչելի դարձնել տրանսպորտը, բնակատեղին, մշակության գործունեությունները և ազատ ժամանցը:

Խարտիայի բոլոր դրույթները կիրառելի են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Խարտիայի 15-րդ հոդվածը նաև երաշխավորում է հաշմանդամների հատուկ իրավունքներ: Խարտիայի «Ե» հոդվածը՝ խտրականության արգելման դրույթը, սահմանում է. «Սույն Խարտիայում նշված իրավունքներից օգտվելը պետք է երաշխավորվի առանց խտրականության որևէ հիմքի, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, առողջությունը, ազգային փոքրամասնությանը միացումը, ծնունդը կամ այլ կարգավիճակը»: Այն արգելում է խտրականությունը, այդ թվում՝ հաշմանդամության հիմքով: «Ե» հոդվածի գործառույթն այն է, որ ապահովի Խարտիայում երաշխավորված բոլոր իրավունքների հավասար և արդյունավետ իրականացումը՝ անկախ որոշ անձանց կամ անձանց խմբերի առանձնահատկություններից:

«Ե» հոդվածը ոչ միայն արգելում է ուղիղ խտրականությունը, երբ անձը կամ խումբը առանց պատշաճ հիմնավորման ենթարկվում է ավելի անբարենպաստ վերաբերմունքի, քան մյուսները, այլ նաև խտրականության բոլոր անուղղակի ձևերը: Նման անուղղակի խտրականությունը կարող է առաջանալ, եթե պատշաճ և դրական կերպով հաշվի չառնվեն բոլոր համապատասխան տարբերությունները, կամ եթե չձեռնարկվեն բավարար քայլեր՝ ապահովելու, որ բոլորին հասանելի իրավունքները և հավաքական առավելություններն իրականում հավասարապես հասանելի լինեն բոլորի կողմից և բոլորի համար:



15-րդ հոդվածի ընդհանուր նպատակը անկախության և սոցիալական ինտեգրման իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովելն է: Դրա հիմքում ընկած տեսլականը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար քաղաքացիությունն է, ինչը ենթադրում է, որ հավասար վերաբերմունքը պետք է ոչ միայն սահմանվի օրենքով, այլև գոյություն ունենա գործնականում:

15-րդ հոդվածը կիրառվում է բոլոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ՝ անկախ նրանց հաշմանդամության բնույթից և ծագումից, ինչպես նաև տարիքից: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն կարևորել է բժշկական սահմանումից սոցիալական սահմանման անցումը, որը կենտրոնանում է առողջական խնդիրների, միջավայրային և անհատական գործոնների փոխազդեցության վրա:

ԿՐԹՈՒԹՅԱՆ և ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք՝ անկախ տարիքից, ինչպես նաև նրանց հաշմանդամության բնույթից և ծագումից, իրավասու են ստանալու խորհրդատվություն, կրթություն և մասնագիտական ուսում՝ հնարավորության դեպքում ընդհանուր ծրագրերի շրջանակներում, և միայն բացառիկ դեպքերում՝ մասնագիտացված կառույցների միջոցով՝ պետական կամ մասնավոր: 15-րդ հոդվածի համաձայն մասնագիտական ուսումը ներառում է բարձրագույն կրթության բոլոր տեսակները, այդ թվում՝ համալսարանական կրթությունը: 15-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց նկատմամբ, ոչ միայն երեխաների:

Սույն հոդվածի հիմական շեշտադրումը ներառական կրթության վրա է: Ներառական կրթության իրավունքը վերաբերում է երեխայի ընդհանուր կրթական համակարգում լիարժեք և իմաստալից մասնակցելու իրավունքին: Ներառական կրթությունը ենթադրում է աջակցություն և ողջամիտ հարմարեցումներ, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան արդյունավետ կերպով գտվել դպրոցական կրթությունից:

Դա կարող է ներառել դասարանի և դրա տեղակայության հարմարեցումներ, հաղորդակցման և ուսումնական նյութերի տարբեր ձևերի տրամադրում, ուսուցման կամ գնահատման իրավիճակներում մարդկային ռեսուրսների կամ օժանդակ տեխնոլոգիաների ապահովում, ինչպես նաև ոչ նյութական հարմարեցումներ, օրինակ՝ աշակերտին ավելի շատ ժամանակ տրամադրումը, ֆոնային աղմուկի մակարդակի նվազեցումը, զգայական գերծանրաբեռնվածության կանխումը, այլընտրանքային գնահատման մեթոդների կիրառումը կամ ուսումնական ծրագրի որևէ բաղադրիչի փոխարինումը այլընտրանքային բաղադրիչով:

- Ողջամիտ հարմարեցումները պետք է պատշաճ կերպով համապատասխանեցվեն անհատի պայմաններին և ուսման կարիքներին:

- Հաշմանդամություն ունեցող սովորողների կողմից ստացվող որակավորումները պետք է համարժեք լինեն մյուսների ստացած որակավորումներին (անկախ նրանից՝ հաշմանդամություն ունեցող անձինք սովորել են ընդհանուր թե հատուկ կրթական համակարգում, կամ նրանց համար դպրոցական ավարտական քննությունների ընթացքում կիրառվել են հատուկ պայմաններ):

- Հաշմանդամություն ունեցող աշակերտների և ուսանողների հետ աշխատող ուսուցիչները և օգնականները պետք է ունենան համապատասխան որակավորում:

- Խարտիայի այս դրույթի համաձայն կրթության ոլորտում հաշմանդամության հետ կապված պահանջվում է խտրականությունը կանխարգելող օրենսդրություն: Նման օրենսդրությունը, առնվազն, պետք է պահանջի համոզիչ հիմավորում հատուկ կամ առանձնացված կրթական համակարգերի համար և ապահովի արդյունավետ իրավական պաշտպանություն նրանց համար, ովքեր ապօրինաբար զրկվել են կրթությունից, առանձնացվել են կամ այլ կերպ զրկվել կրթության արդյունավետ իրավունքից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

- Այս դրույթը պահանջում է, որ Մասնակից պետություններն ապահովեն ֆիզիկական և/կամ ինտելեկտուալ/հոգեսոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքի բաց շուկայի հավասար և արդյունավետ մատչելիությունը:

- Մասնակից պետություններն ունեն հայեցողության բավարար շրջանակ՝ այդ ամենը հնարավոր դարձնելու իրենց կողմից ձեռնարկվող միջոցառումներում: Սակայն աշխատանքի բաց շուկայում իրական հավասար հնարավորություններ ստեղծելու համար անհրաժեշտ է խտրականությունը կանխարգելող օրենսդրություն: 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ խտրականությունը կանխարգելող օրենսդրությունը պետք է ներառի աշխատանքային պայմանների հարմարեցումը (ողջամիտ հարմարեցում) և ապահովի արդյունավետ իրավական պաշտպանություն նրանց համար, ովքեր ապօրինաբար ենթարկվել են խտրականության: Բացի այդ, գործատուի վրա պետք է դրվեն պարտավորություններ՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ մուտքը աշխատանքի շուկա և նրանց աշխատանքի պահպանումը:

Խարտիայի 15 հոդվածի 2-րդ պարբերությունը պահանջում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք աշխատանքը կատարեն սովորական աշխատանքային միջավայրում: Միայն բացառիկ դեպքերում կարող է նախատեսվել պաշտպանված զբաղվածություն, որի նպատակն է օգնել աշխատողներին տեղափոխվել բաց աշխատաշուկա: Պաշտպանված զբաղվածության հաստատություններում աշխատող անձինք, որտեղ արտադրությունը հիմնական գործունեությունն է, իրավունք ունեն օգտվելու աշխատանքային օրենսդրության հիմնական դրույթներից, մասնավորապես, արդար վարձատրության իրավունքից և արհմիութենական իրավունքներից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

15-րդ հոդվածի երրորդ պարբերությունը պարտավորեցնում է Մասնակից պետություններին ընդունել հաշմանդամության համատեքստում հետևողական քաղաքականություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ինտեգրման և լիարժեք մասնակցության նպատակներին հասնելու համար դրական միջոցառումներ:

Այս դրույթը պահանջում է խտրականության դեմ համապարփակ օրենսդրության գոյություն, որը նախատեսում է արդյունավետ իրավական պաշտպանություն հաշմանդամության հետ կապված հարցերում՝ ներառելով ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ոլորտները, այդ թվում՝ բնակարանային պայմանները, տրանսպորտը, հեռահաղորդակցությունը, մշակութային և ժամանցային գործունեությունը, ինչպես նաև արդյունավետ միջոցներ նրանց համար, ովքեր ենթարկվել են անօրինական վերաբերմունքի:

15-րդ հոդվածի երրորդ պարբերությունը պարտավորեցնում է Մասնակից պետություններին միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությունում անկախ ապրելու իրավունքը: Դա ներառում է ֆինանսական և անձնական աջակցություն և տեխնիկական օգնության միջոցների տրամադրումը, ինչպես նաև խոշոր հաստատությունների աստիճանական լուծարումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները պետք է հաշվի առնվեն բնակապահովման քաղաքականության մեջ, ներառյալ՝ համապատասխան քանակությամբ հարմարեցված հանրային, սոցիալական կամ մասնավոր բնակարանների կառուցումը: Բացի այդ, անհրաժեշտ է տրամադրել ֆինանսական աջակցություն՝ առկա բնակարանների հարմարեցման համար:

Հանրային տրանսպորտը (ցամաքային, երկաթուղային, ծովային և օդային), բոլոր նորակառույց կամ վերանորոգված հանրային շենքերը, հիմնարկներն ու հանրության համար բաց շինությունները, ինչպես նաև մշակութային և ժամանցային գործունեությունը պետք է մատչելի լին ի:

Պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ բարելավելու նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների մատչելիությունը:

Խարտիայի 15-րդ հոդվածի երրորդ պարբերությունը պահանջում է, մասնավորապես, որ հաշմանդամություն ունեցող անձինք մասնակցեն համակարգված հաշմանդամության քաղաքականությունների մշակման, իրականացման և վերանայման գործընթացներին:

Մասնակից պետությունների պարտավորությունը՝ միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք սոցիալական ներառման և հասարակական կյանքին մասնակցության ապահովման համար, սերտորեն կապված են նրանց շրջանում աղքատության նվազեցման և վերացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի հետ: Խարտիայի 15-րդ հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված պարտավորությունները գնահատելիս հաշվի է առնվում հաշմանդամություն ունեցող անձանց աղքատության մակարդակը :

Եվրոպական սոցիալական խարտիայի 23-րդ և 11-րդ հոդվածները

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների տ եսանկյունից կարևոր են նաև 23-րդ հոդվածը՝ տ արեց անձանց իրավունքների վերաբերյալ, և 11-րդ հոդվածը՝ առողջության պաշտ պանության իրավունքի վերաբերյալ: 23-րդ հոդվածի համաձայն՝ պետք է գոյություն ունենա տ արեց անձանց համար աջակցվող որոշումների կայացման ներպետական իրավական դաշտ՝ նրանց ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունքը պետք է պահպանվի: Տարեց անձանց չպետ ք է համարել անկարող ինքնուրույն որոշումներ կայացնելու միայն այն պատ ճառով, որ նրանք ունեն որոշակի հիվանդություն կամ հաշմանդամություն:

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ սուբստիտուտիվ (իրենց փոխարեն կայացվող) որոշումների համակարգը փոխարինելու աջակցվող որոշումների համակարգով, որը հարգում է անձի ինքնավարությունը, կամքը և նախընտրությունները: Դրանք կարող են լինել ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ բնույթի:

Տարեց անձինք կարող են աջակցություն կարիք ունենալ իրենց կամքն ու նախընտրությունները արտահայտելու համար, ուստի մինչև այն եզրակացության գալը, որ նրանք չեն կարող ինքնուրույն կայացնել տվյալ որոշումը, պետք է կիրառվեն հաղորդակցման բոլոր հնարավոր միջոցները, ներառյալ խոսքերը, պատկերները և նշանները: Այս առնչությամբ ներպետական իրավական դաշտը պետք է ապահովի համապատասխան երաշխիքներ՝ կանխելու տարեց մարդկանց ինքնուրույն որոշումների ընդունելու հնարավորությունից կամայական զրկումը: Պետք է երաշխավորվի, որ տարեց մարդկանց անունից գործող ցանկացած անձ հնարավորինս քիչ միջամտի նրանց ցանկություններին և իրավունքներին (Բացատրական մեկնաբանություն, 2013թ.):

11-րդ հոդվածի երրորդ պարբերությա համաձայն՝ պետք է հասանելի լինեն հասարակական հիմքով հոգեկան առողջապահական ծառայություններ, և անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր՝ անցում կատարելու նախկին խոշոր հաստատություններից դեպի հասարակական հոգեկան առողջապահության համակարգ:

Համապատասխան կոլեկտիվ բողոքներ

«Ա«

- *Աուտիզմ Եվրոպա» միջազգային ասոցիացիան ընդդեմ Ֆրանսիայի*, գանգատ թիվ 13/2002, ըստ էության որոշում՝ 2003 թվականի նոյեմբերի 4-ի՝ աուտիզմով երեխաների կրթության մատչելիություն (հոդվածներ 15 և 17):
- *Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Բելգիայի*, գանգատ թիվ 75/2011, ըստ էության որոշում՝ 2013 թվականի մարտի 18-ի՝ խիստ կախյալ հաշմանդամ մեծահասակների համար հարմարությունների և կացարանի մատչելիություն:
- *Հաշմանդամների եվրոպական ակցիան (AEH) ընդդեմ Ֆրանսիայի*, գանգատ թիվ 81/2012, 2013 թվականի սեպտեմբերի 11-ի գործով՝ ըստ էության որոշում՝ հաշմանդամ երի համար կրթության և մասնագիտական ուսուցման մատչելիություն (հոդվածներ 15 և 17):
- *Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության կենտրոնն (MDAC) ընդդեմ Բելգիայի*գանգատ թիվ 109/2014, որոշում ընդունելիության մասին և ըստ էության՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ի գործով՝ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառական կրթության մատչելիությունն (հոդվածներ 15 և 17):
- *Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) և Inclusion Europe-ն ընդդեմ Բելգիայի*, հայց թիվ 141/2017, 2020 թվականի սեպտեմբերի 9-ի գործով՝ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառական կրթության հասանելիության վերաբերյալ որոշում (հոդվածներ 15 և 17):
- *Եվրոպական հաշմանդամության ֆորումը (EDF) և In clusion Europe-ն ընդդեմ Ֆրանսիայի*, գանգատ թիվ 168/2018, 2022 թվական ի հոկտեմբերի 19-ի ըստ էության որոշում՝ առողջապահական ծ առայությունների մատչելիություն, ինքնավարության, սոցիալական ինտեգրման և համայնքի կյանքին մասնակցելու իրավունքի (հոդված 15/3), կրթության մատչելիություն (հոդված 15/1):

Վերջին եզրակացություններ 15-րդ հոդվածի վերաբերյալ՝ 2020 թ

Եվրոպական սոցիալական խարտիան, որն ընդունվել է 1961թ.-ին և վերանայվել 1996թ.-ին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երկնմանակն է տնտեսական և սոցիալական իրավունքների ոլորտում: Այն երաշխավորում է մարդու իրավունքների լայն շրջանակ՝ կապված աշխատանքի, բնակարանի ապահովման, առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության հետ:
Համաեվրոպական մակարդակով ոչ մի այլ իրավական փաստաթուղթ չի ապահովում սոցիալական իրավունքների այնպիսի լայնածավալ և լիարժեք պաշտպանություն, որքան Խարտիան:
Խարտիան դիտարկվում է որպես Եվրոպայի սոցիալական սահմանադրություն և էական բաղադրիչ է մայրցամաքի մարդու իրավունքների կառուցման գործում:

PREMS 115023

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

European Social Charter | Charte sociale européenne

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE